ՍՊԻՏԱԿԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԳՈՏՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Խ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

1988թ. դեկտեմբերի 7-ին, ժամը 11 անց 40 րոպեին Հանրապետության հյուսիսային շրջաններում տեղի ունեցավ վերջին հարյուրամյակների բնական ամենաուժեղ աղետը՝ 10,5 բալ ուժգնությամբ երկրաշարժը, որը վայրկյանների ընթացքում հողին հավասարեցրեց Սպիտակ, Գյումրի, Վանաձոր, Ստեփանավան քաղաքները, լրիվ ավերվեցին 58 գյուղ, մասնակի՝ մի քանի տասնյակ բնակավայրեր: Էպիկենտրոնը գտնվում էր Սպիտակ քաղաքում և Շիրակամուտ՝ նախկին Նալբանդ գյուղում: Այս ահավոր աղետից տուժեցին արդյունաբերական, գյուղատնտեսական գրեթե բոլոր կառույցները, կոմունիկացիաները, բնակելի շենքերը, խափանվեցին էլեկտրաէներգիայի, ջրի, գազի մատակարարումը, հեռախոսային ցանցը: Անօթևան բնակչության մի մասը տեղավորվեց վրաններում, ժամանակավոր կացարաններում, անգամ վթարային շենքերում, իսկ մի մասը էվակուացվեց Հանրապետության մյուս շրջանները և նրա սահմաններից դուրս :

Երկրաշարժի ողբերգական հետևանքները շուտափույթ վերացնելու համար ստեղծվեց ԽՍԿԿ քաղբյուրոյի հատուկ հանձնաժողով՝ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ Միության Մինիստրների խորհրդի նախագահ Ն.Ի.Ռիժկովի գլխավորությամբ, և 1988 թ. դեկտեմբերի 10-ը երկրում հայտարարվեց սգի օր:

ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի (ԵԳԻ) Աշխարհագրության բաժնում մշակվեց հարցաթերթիկ, որտեղ պետք է պատասխաններին հետևյալ հարցերին. ինչպիսին էին բնակչության տեղաշարժերը երկրաշարժից հետո, զոհվածների, վիրավորների, աղետի գոտուց (նաև Հանրապետության մյուս շրջաններից) հեռացած մարդկանց թիվը: Տեղերում հավաքած նյութերը ճշտվել են Վիճակագրական վարչությունում և որպես պաշտոնական թվեր՝ օգտագործվել:

Երկրաշարժի տված նյութական վնասները գնահատվել են 13-14 մլրդ. ռուբլի: Աղետն ընդգրկել է Հանրապետության տարածքի ավելի քան մեկ երրորդը (11,3 հազար քառ. կմ), ուր տեղաբաշխված էին 8 քաղաք, 16 քաղաքատիպ ավան, 16 գյուղական շրջան՝ 344 գյուղով, որտեղ մինչև երկրաշարժն ապրում էին 957,4 հազար մարդ, այդ թվում 596 հազարը քաղաքաբնակ:

Ըստ 1989թ. (առ 12 հունվարի) մարդահամարի, բնակչության թվաքանակը պակասել է 20,6%-ով (մանրամասն տե՛ս աղյուսակ 1):

Հայաստանի վիճակագրության հաղորդագրությունում ասված է, որ Հանրապետության ղեկավարների ու տեղական իշխանությունների ներկայացուցիչները փրկարար աշխատանքների ընթացքում կատարում էին ինչպես փլատակների, այնպես էլ զոհվածների ամենօրյա հաշվառում: Այդ եղանակով ստացված տվյալների համաձայն, զոհվել է ավելի քան 25 հազար մարդ, այդ թվում՝ 730 աշակերտ, 670 ուսուցիչ, 197 բժիշկ, մի քանի հարյուր ինժեներ, տեխնիկ, գյուղատնտես և այլ մասնագետներ, 1200 երեխա երկկողմանի զրկվել են ծնողներից:

Աղյուսակ 1

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՍՊԻՏԱԿԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԳՈՏՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ 1-Ը ՀՈՒՆՎԱՐԻ 1988Թ. ԵՎ ԱՌ 12-Ը ՀՈՒՆՎԱՐԻ 1989Թ. (ԸՍՏ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՍԱՐԴԱՀԱՄԱՐԻ)[1]

Շրջանի կամ քաղաքի անվանումը	Բնակչության թիվը առ. 1.01.1988Թ. Հայ.մարդ.			Բնակչության թիվը առ 12.01.1989Թ. Հայ.մարդ.			Շրջան, կամ քաղաք մակ. մարդ.	Բնակավայրի թիվը	Գյուղ. բնակ. խտությունը 1 կմ² վրա մարդ.	1988-89 թթ. բնակ. աճը Հայ. մարդ.
	գյուղում	դիմաքնում	ընդամենը	գյուղում	դիմաքնում	ընդամենը				
Ամասիա	19,2	-	19,2	6,3	-	6,3	608	26	10,4	-12,9
Անի	13,8	6,2	20,0	15,6	8,2	23,8	423	16	36,4	3,8
Ապարան	13,1	6,9	20,0	14,3	7,0	21,3	691	18	23,8	1,3
Արագած	14,0	-	14,0	13,5	-	13,5	382	22	38,2	-0,5
Արթիկ	21,9	23,3	45,2	31,4	28,8	60,2	477	21	65,4	15,0
Ախուրյան	39,4		39,4	38,9	-	38,9	568	35	67,5	0,5
Գուգարք	30,9	0,4	31,3	20,2	0,4	20,6	766	18	26,1	-10,7
Ղուկասյան	9,9	-	9,9	10,3	-	10,3	547	25	18,3	0,4
Իջևան	25,4	21,4	46,8	23,1	22,7	45,8	1330	21	17,8	-1,0
Կաղինինո	26,6	12,3	38,9	20,2	10,4	30,6	690	21	29,3	-8,3
Նոյեմբերյան	21,9	8,0	29,9	25,2	8,8	34,0	538	18	46,8	4,1
Սպիտակ	28,4	18,5	46,9	8,4	3,6	12,0	539	20	15,4	-34,9
Ստեփանավան	16,4	20,6	37,0	17,9	9,7	27,6	624	19	28,5	-9,4
Թալին	24,0	11,3	35,3	26,7	13,2	39,9	1090	39	20,7	4,6
Թումանյան	25,0	33,5	58,5	28,3	33,8	62,6	1109	33	26,0	4,1
Շամշադին	23,9	10,2	34,1	24,4	10,4	34,8	824	15	29,6	0,7
ք. Դիլիջան	6,7	23,4	30,1	6,7	23,7	30,4	6	1	-	0,3
ք. Կիրովական	-	170,9	170,9	-	74,3	74,3	27	1	-	-96,6
ք. Լենինական	-	230,0	230,0	-	120,0	120,0	50	1		-110,0
	360,5	596,9	957,4	330,5	375,0	706,2	11289	370		

Բացի այդ, աղետի գոտուց էվակուացվել է 80 հազար մարդ, իսկ մեր հաշվումներով 116,2 հազար մարդ տեղափոխվել է սեփական նախաձեռնությամբ, 30 հազար աղրբեջանցիներ հեռացել են նախքան հայ–աղրբեջանական հակամարտությունները: Հետևապես՝ աղետի գոտուց դնացել է 226,2 հազար մարդ, դրան ավելացրած՝ 25 հազար զոհված: Ընդհանուր թիվը կլինի 251,2 հազար մարդ:

Բժշկական տեղեկանքների հիման վրա ՁԱԳՍ–ում մինչև 1989Թ. հուլիսի 1–ը երկրաշարժի զոհերի ընդհանուր թիվը գրանցվել է 16895 մարդ, այդ թվում Գյումրի քաղաքում զոհվել է 10286 մարդ, սակայն քաղսովետի նախագահ Համբարձումյանի հետ զրույցի ժամանակ պարզվեց, որ մինչև 1989Թ. հուլիսի 1–ը զոհերի ընդհանուր թիվը եղել է 13101 մարդ կամ 2815–ով

[1] 1989Թ. համամիութենական մարդահամարի արդյունքները Հայկական ԽՍՀ–ում. Ե., 1991, էջ 18-20:

[2] Խորհրդային Հայաստան, 21. VII, 1989:

ավելի, քան հրապարակված թիվն է: Սպիտակ քաղաքում և համանուն շրջանում զոհվել են 5058, Վանաձորում 683, Ախուրյանի շրջանում՝ 392 մարդ, իսկ շրջանային գործադիր կոմիտեի նախագահի տեղակալ Մխոյանի տվյալներով 485 մարդ կամ 93-ով ավելի, Ստեփանավան քաղաքում և համանուն շրջաններում 77, Գուգարքի շրջանում 73, աղետի գոտու մյուս շրջաններում ու քաղաքներում ընդամենը 326 մարդ:

Երկրաշարժի զոհերի վերաբերյալ հրապարակված տվյալների տարբերությունների բացատրությունը տրված է Հայաստանի պետվիճակագրության «Հանրապետության բնակչության ընդհանուր թվի առ. 1 հունվարի 1990թ.» պաշտոնական օգտագործման գրքույկում, որտեղ ասված է. «1989թ. համամիութենական մարդահամարը Հայաստանի Հանրապետությունում անցկացվեց բարդ իրադրության պայմաններում»[3]:

Կործանարար երկրաշարժը, իրադարձությունների սրումը ԼՂԻՄ-ում հասցրեցին բնակչության ինտենսիվ տեղաշարժերի, ինչպես հանրապետության ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, որը բացասաբար անդրադարձավ մարդահամարի արդյունքների վրա:

Լրացուցիչ դժվարություն առաջացրեց էվակուացվածների և փախստականների հաշվառումը: Այսպես, մարդահամարի վճռական պահին Ադրբեջանից Հայաստան էին եկել 200 հազար հայ փախստականներ, իսկ հանրապետությունից հեռացել էին մոտ 160 հազար ադրբեջանցիներ և ավելի քան 200 հազար մարդ էլ էվակուացվել էր աղետի գոտուց: Այս պայմաններում չի բացառվում հանրապետության տարածքում բնակչության զգալի թերահաշվառում, մանավանդ աղետի գոտում:

Բնակչության թերահաշվառման վիճակագրության կարծիքի հետ մենք համամիտ ենք, քանի որ երկրաշարժը համընկավ ոչ պակաս մի ուրիշ աղետի՝ Ադրբեջանից հայերի բռնագաղթման և Հայաստանից ադրբեջանցիների տեղափոխման հետ: Այդ օրերին հիմնական ուշադրությունն ուղղված էր փլատակներից կենդանի մնացած մարդկանց դուրս բերմանը:

Պաշտոնական թվերից երևում է, որ Գյումրիի բնակչությունը պակասել է 47,8, Վանաձորինը՝ 57,0 տոկոսով, Սպիտակինը և համանուն շրջանինը՝ 74,4, Տաուշինը՝ 8,3, Ամասիայինը՝ 19,9 տոկոսով: Նման տեղաշարժեր կատարվել են նաև մյուս բնակավայրերում: Այսպես, Ջաջուռ, Ջրառատ (Ախուրյանի շրջան), Ավշեն, Արագած, Ջամշլու, Սիփան (Արագածի շրջան), Մուլք, Նորաշեն (Ապարանի շրջան), Բազում, Վահագնի, Դարպաս, Լերմոնտովո, Ֆիրուզովո (Գուգարքի շրջան), Ղուկասյան, Կրասար, Մուսայելյան, Սալա, Բաշգյուղ, Լեռնագյուղ (Ղուկասյանի շրջան), Հագվի (Թումանյանի շրջան), Ջուջևան, Լճաձոր, Բագրատաշեն, Լալվար, Պաղավան, Ոսկեպար (Նոյեմբերյանի շրջան); Գյուլագարակ, Կիրովի (Ստեփանավանի շրջան), Այգեպար, Նավուր (Տավուշի մարզ) գյուղերի բնակչության թիվը պակասել է 25 տոկոսով, 26-50 տոկոսով պակասել են Ախուրյան, Մեծ Սարիար, Մուսայելյան, Շիրակ (Ախուրյանի շրջան), Ամասիա, Օքսյուզ, Ղարաբուլաղ (Ամասիայի շրջան), Գուգարք, Շահումյան (Գուգարքի շրջան), Նեղոց (Թումանյանի շրջան) Ղզլդաղ,

---

[3] Երկրաշարժից առավել տուժած 8 շրջաններում (Ամասիա, Արագած, Արթիկ, Ախուրյան, Գուգարք, Ղուկասյան, Կալինինո, Սպիտակ, Ստեփանավան), ինչպես նաև Գյումրի, Դիլիջան, Սպիտակ, Ստեփանավան քաղաքներում մարդահամարը կատարվել է կրճատ ծրագրով, դրա հետևանքով մոտ 600 հազար մարդու վերաբերյալ չեն ստացվել անհրաժեշտ տեղեկություններ՝ ամուսնական վիճակի, ընտանեկան կազմի, զբաղմության միջոցների աղբյուրների, բնակարանային պայմանների և այլն:

Կաթնառատ, Մեզովկա, Պրիվոլնայա, Սարատովկա (Կալինինոյի շրջան), Լեռնավան, Սարալանջ, Քարաձոր (Սպիտակի շրջան), Հովաձոր, Պուշկինո, Կույբիշև (Ստեփանավանի շրջան) գյուղերի բնակչության թիվը: 51-75 տոկոսով պակասել են Ջաջուռի երկաթգծի կայարանի ավանի, Կառնուտ, (Ախուրյանի շրջան), Հակկո, Կաքավաձոր, Կարմրաշեն, Կաթնաղբյուր, Ներքին Սասնաշեն, Ծամաքասար (Թալինի շրջան) գյուղերի բնակչության թիվը, իսկ 76 և ավելի տոկոսով՝ Մայիսյան (Ախուրյանի շրջան), Դուզքենդ, Գյուլլիբուլաղ, Ջայբասար, Ենիցոլ, Իբիշի, Ջիվինլի, Մաղարաջուղ, Օխչիօղլի, Շուրաբաղ, Թափաքյոյ (Ամասիայի շրջան), Արջուտ, Գյամզալդարա, Հայդարլի (Գուգարքի շրջան), Վերին Ախթալա, Այրում (Թումանյանի շրջան), Ղզղալան, Իզմանլու (Կալինինոյի շրջան), Ղուրսալի, Սարալանջ, Լեռնանցք, Գոմարան, Գեղասար (Սպիտակի շրջան) գյուղերում:

Ամփոփենք. 40 բնակավայրերում բնակչության թիվը պակասել է մինչև 25 տոկոս, 19 բնակավայրերում 26-50 տոկոս, 29 բնակավայրերում 51-75 տոկոս, 39 բնակավայրերում 76 և ավելի տոկոս: Եվ ընդհակառակը, 114 բնակավայրերում բնակչության թիվն ավելացել է 25 տոկոսով, 55 բնակավայրերում 26-50 տոկոսով, 22 բնակավայրերում 51-75, իսկ 19 բնակավայրերում 76 և ավելի տոկոսով:

Այսպիսով, երկրաշարժի գոտում արդյունքը եղել է հետևյալը՝ 127 բնակավայրերում բնակչության թիվը պակասել է, 210-ում ավելացել, իսկ 33-ում այն մնացել է անփոփոխ:

Երկրաշարժից 14 օր հետո, դեկտեմբերի 21-22-ը ԽՍՀՄ ԳԱ Աշխարհագրության ինստիտուտի և ՀՀ ԳԱ ԵԳԻ գիտաշխատողների համատեղ ջանքերով (ուղղաթիռի միջոցով) կատարվել է աղետի գոտու խիստ տուժած 8 շրջանների (Ախուրյան, Արագած, Գուգարք, Ղուկասյան, Կալինինո, Սպիտակ, Ստեփանավան և Թումանյան) գյուղերի բնակելի և օժանդակ կառույցների ավերվածության աստիճանի ավիալուսանկարում: Հետազոտություններից պարզվել է, որ նկարահանված գյուղերից 84-ի բնակելի տները և օժանդակ շենքերը քանդվել են (ավերվել) 10 %-ով, 18 գյուղ՝ 20, 20-ը՝ 30, 6-ը՝ 40, 12-ը՝ 50, 15-ը՝ 60-70, 12-ը՝ 80, 2-ը՝ 90-100 %-ով, իսկ 35 գյուղ մնացել են կանգուն (տե՛ս աղ. 2):

Երկրաշարժից չափազանց տուժել են էպիկենտրոնի շրջակա գյուղերի բնակելի կառույցները, հասարակական շենքերը և անասնապահական ֆերմաները: 60-100 տոկոսով ավերվել են Քեթի, Այգաբաց, Կրաշեն, (Ախուրյանի շրջան), Վերին Քիլիսա, Գյուզալդարա (Գուգարքի շրջան), Զորաշեն, Սարապատ, Լեռնագյուղ, Ծողամարգ, Փոքր Սարիար, Կաքավասար, Արփենի (Ղուկասյանի շրջան), Աարալ, Ղուրսալի, Արևշող, Սարամեջ, Շենավան, Գոգարան, Սարահարթ, Շիրակամուտ, Գեղասար, Ջրաշեն, Լեռնավան, Աարալանջ, Հարթագյուղ, Ղալթաղչի, Մեծ Պարնի, Մալքարեր, Խնկոյան (Սպիտակի շրջան) գյուղերի բնակելի տները: Վերոհիշյալ գյուղերում մինչև երկրաշարժը ապրում էին 132,4 հազար մարդ, իսկ աղետից հետո՝ 117 հազար կամ 15 հազար մարդով պակաս: Առանձին շրջաններում տարբերություններն ավելի մեծ են, օրինակ, Սպիտակի շրջանում մինչև երկրաշարժն ապրում էին 29,2 հազար մարդ, աղետից հետո մնաց 8,4 հազար կամ 12,4 հազարով պակաս, Գուգարքի շրջանում բնակչության թիվը պակասել է 7,6, Ախուրյանում 1,7 հազարով: Տեղի է ունեցել և հակառակը: Տուժած շրջանների բնակիչների մի մասը տեղափոխվել է հարևան շրջանների գյուղերը, որի հետևանքով ավելացել է նրանց բնակչության թիվը. օրինակ, Արագածի շրջանում գյուղական

բնակչության թիվը 5,4 հազարից հասել է 14,1 հազարի, Կալինինոյինը՝ 12,7 հազարից՝ 19,8 հազարի:

Տեղերում հավաքած նյութերի և վիճակագրական վարչության տվյալների հիման վրա կազմել ենք Սպիտակի երկրաշարժի ուժգ շրջանների գյուղերի բնակելի կառույցների ավերվածության պատկերը:

Աղյուսակ 2

ՍՊԻՏԱԿԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԳՈՏՈՒ ԽԻՍՏ ՏՈՒԺԱԾ 8 ՇՐՋԱՆՆԵՐԻ ԳՅՈՒՂԵՐԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԱՎԵՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ ԵՎ ՆՐԱՆՈՒՄ ԱՊՐՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ ՄԻՆՉԵՎ ԵՐԿՐԱՇԱՐԺԸ*

Շրջանների անունը		տոկոսներով մինչև՝										
		10	20	30	40	50	60	70	80	90–100	չեն ավերվել	Նշանակությունը
Ախուրյան	1	3	3	4	2	5	4	1	-	-	-	22
	2	3607	7150	4407	1312	6950	3748	139	-	-		27313
Արագած	1	7	6	7	1	1					2	24
	2	5808	1984	4698	831	304					429	14054
Գուգարք	1	5	1	-	1	1	1	1	1	-	3	14
	2	2782	412	-	27	1080	-	154	-	-	2639	9148
Ղուկասյան	1	5	1	2	1	-	3	-	1	-	3	16
(Աշոցք)	2	4210	367	139	53	-	976	-	169	-	274	6188
Կալինինո	1	2	2	2	-	1					13	20
(Տաշիր)	2	569	1009	401	-	192					17782	19963
Սպիտակ	1	-	-	1	-	2	2	2	11	2	-	20
	2	-	-	687	-	377	1220	1252	3608	1263	-	8407
Ստեփանավան	1	2	5	4	1	1	-	1	-	-	3	17
	2	3875	8545	3177	1471	418	-	810	-	-	2458	16751
Թումանյան	1	-	-	-	-	1					11	12
	2	-	-	-	-	5059					10058	15112
Ընդամենը		24	18	20	6	12	10	5	13	2	35	145
		22848	15467	13509	3694	14380	5944	2355	3777	1263	33689	116926

Թեև բնական աղետին ուղեկցեց ոչ պակաս արհեստական ողբերգությունը՝ Ադրբեջանում ապրող հայ բնակչության (ավելի քան 300 հազար մարդու) բռնի տեղահանումը, սպանությունները, Հայաստանի հաճախակի շրջափակումները, գնացքների արգելումները, բեռների թալանումը, գազամուղի անջատումը և այլ բարբարոսություններ, որի հետևանքով անօթևան մնացած 500 հազար մարդուն ավելացան Ադրբեջանի հայ փախստականները ևս, որոնց

* 1.Կոտորակի համարիչը բնակավայրերի թիվն է, 2. հայտարարը՝ բնակչության թվաքանակը:

ընդհանուր թիվը հասավ 800 հազար մարդու: Այնուհանդերձ, բազմաթիվ ասպատակություններ տեսած և հաղթահարած ժողովուրդը նախկին Միության հանրապետությունների և արտասահմանյան պետությունների մարդկային, ֆինանսական և բարոյական անշահախնդիր օգնության շնորհիվ հաղթահարեց ստեղծված ծանր դժվարությունները. վերականգնվում էին ավերված բնակավայրերը: Այդ տարիներին աղետի գոտին դարձել էր շինարարական մեծ հրապարակ միության մեջ[4]: Գյումրիում գործարկվեցին Անի, Մուշ, Վանաձորում Տարոն բնակելի թաղամասերը, Սպիտակում՝ 250 տնակներով իտալական ավանը, որտեղ բնակեցվել են տասնյակ հազարավոր անօթևան մնացած ընտանիքներ: Շինարարական մեծ աշխատանքներ ծավալվեցին նաև մյուս քաղաքներում, գյուղերում: Շոշափելի տեղաշարժեր կատարվեցին նաև բնակչության դեմոգրաֆիայի ուղղությամբ:

Աղետի գոտու բնակչության թիվը 1992թ. հասավ 953,3 հազարի, այսինքն, հավասարեցվեց նախաերկրաշարժյան թվին և 248 հազար մարդով գերազանցեց հետերկրաշարժի մակարդակը. այդ թվում 48 հազարը կազմել է բնական աճը, իսկ 200 հազարը երկրաշարժի ժամանակ հեռացած, հետո վերադարձած բնակիչներն են: Աղետի գոտու բնակչության բնական աճը՝ 1000 բնակչի հաշվով 1989թ. եղել է 17,8, 1991թ.՝ 19,5 մարդ, 1987թ. 17,1 մարդու դիմաց: Ավելացել են ամուսնացողները. 1987թ. գրանցվել է 8237, 1990թ. 8042 ամուսնություն՝ 1000 մարդու հաշվով և համապատասխանաբար կազմել՝ 8,7 և 8,6 ամուսնություն: Ուրեմն նախաերկրաշարժի և հետերկրաշարժի ցուցանիշներն իրար հավասարվել են:

Այսպիսով, աղետի գոտու բնակչության բնական աճի միտումը կրկին անգամ ապացուցում է, որ թե բնական աղետը և թե հաճախակի կրկնվող բարբարոս ցեղերի ասպատակությունները չեն կարողացել սասանել հայ ժողովրդի աներեր հաստատակամությունը և տոկունությունը՝ հանուն իր գոյապահպանման:

Սակայն Հայաստանը, որ անցած 70 տարում դարձել էր բարձր զինվածության, արտադրության տեխնոլոգիայի կազմակերպման և կառավարման արտադրական մակարդակ ունեցող հզոր ինդուստրիայի, զարգացած գյուղատնտեսության և բարձր մշակույթի երկիր, որն աշխարհի 80 երկրներ էր առաքում 200 տեսակի արդյունաբերական արտադրանք՝ էլեկտրատեխնիկա, սարքաշինություն, հաստոցաշինական գործիքներ և այլ սարքեր, այսօր դարձել է աշխարհի ամենահետամնաց երկիրը: Ամբողջապես կազմալուծվել է ժողովրդական տնտեսությունը, չի գործում ծանր արդյունաբերությունը, ծայր աստիճան ընկել է ժողովրդի կենսամակարդակը, հասարակությունը բաժանվել է երկու հակառակ բևեռների, մի փոքր խումբ անզուսպ հարստանում է, իսկ ժողովրդի ճնշող մասն ապրում է ծայր աստիճան աղքատության մեջ, ամենուրեք տարածված են թափառաշրջիկությունը, մուրացկանությունը, ավելի քան մեկ միլիոն մարդ հարկադրաբար հեռացել է հանրապետությունից[5], դեգերում է հաց վաստակելու համար: Հանրապետությունից մեկնածները գերազանցում են եկածներին (տե՛ս աղյուսակ 3-ը):

---

[4] Աղետի գոտու վերականգնման համար Ռուսաստանը (նախկին) ծախսել է 5 միլիարդ ռուբլի կամ պայմանականորեն նախատեսված ամբողջ գումարի ավելի քան 30 տոկոսը:

[5] Անկախ հանրապետություն հռչակված երկրում հայերի այդպիսի ծավալուն արտահոսքը, չհաշված օտար նվաճողների սիսիեմատիկ ոչնչի տեղահանումները, հայ ժողովրդի պատմության մեջ ամենաողբերգական էջն է:

Աղյուսակ 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ

	Հանրապետությունում			այդ թվում աղետի գոտում		
	եկել են	մեկնել են	բնական աճ	եկել են	մեկնել են	բնական աճ
1993թ.	3874	30691	–26817	8141	12854	–4713
1994թ.	5009	24152	–19143	4658	10639	–5981
1995թ.	4278	12043	–7765	4012	7076	–3064
1996թ.	2706	9094	–6388	2996	5019	–2023
1997թ.	2672	11149	–8447	3475	6864	–3389
Ընդամենը	18539	87129	–68590	23282	42452	–19170

Պաշտոնական թվերից պարզվում է, որ 1993-1997թթ. ընթացքում հանրապետությունից գնացածները 68590, այդ թվում աղետի գոտուց՝ 19170 մարդով գերազանցել են եկածներին, այսինքն, միգրացիայի բալանսը բացասական է: Բայց դա չի արտացոլում իրական պատկերը քանի որ հանրապետությունից գնացածների ճնշող մասը գրանցումից դուրս չի եկել, մնացել է որպես մշտական բնակիչ՝ հետագայում վերադառնալու նպատակով: Նվազել են նաև ամուսնությունները, ծնունդը, բարձրացել է մահացությունը: Այսպես՝ 1991 թ. համեմատությամբ 1992թ. ամուսնությունը հանրապետությունում պակասել է 3230–ով, 1993թ.՝ 4450, 1994թ.՝ 5518, 1995թ.՝ 5768, 1996թ.՝ 5844, 1997թ.՝ 6859, այսինքն, 6 տարում 31669 ամուսնություն չի գրանցվել: Բնական աճի մասին տե՛ս աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՇԱՐԺԸ

Տարեթիվը	Հանրապետությունում			Աղետի գոտում		
	ծնվել են	մահացել են	բնական աճ	ծնվել են	մահացել են	բնական աճ
1990թ.	79882	21993	57889	22211	5490	167721
1991թ.	77825	23425	54400	21976	6302	15674
1992թ.	70581	25824	44757	18504	6936	11568
1993թ.	59041	27500	31541	16045	4778	11267
1994թ.	51204	24624	26580	14379	6962	7417
1995թ.	49275	24847	24428	13024	6843	6181
1996թ.	48134	24936	23198	11504	6146	5358
1997թ.	43929	23985	19944	11787	6580	5207
Ընդամենը	479871	197134	282737	129430	50037	79393

Լրաբեր 1–9

7 տարվա ընթացքում (1991-1997) Հանրապետությունում ծնունդը պակասել է 159175 երեխայով, բնական աճը՝ 180370 մարդով՝, այդ թվում աղետի գոտում համապատասխանաբար՝ 48258 և 52889 մարդով, իսկ մահացությունը ընդհակառակը՝ բարձրացել է, հաճախ գերազանցել բնական աճը, որի հետևանքով էլ փոփոխվել է բնակչության սեռատարիքային կառուցվածքը, իջել երեխաների և մինչև 15 տարեկան պատանիների տեսակարար կշիռը, իսկ տարիքավորներինը՝ բարձրացել, 5-6 տարով կրճատվել է բնակչության կյանքի միջին տարիքը: Հանրապետության բնակչության թվաքանակը 1990-1998թթ. ավելացել է 276,3 հազար մարդով, աղետի գոտում 78,5 հազար մարդով, հետևապես այդ ժամանակահատվածում բնական աճը գերազանցել է հավելյալ աճին: Դրա պատճառը բնակչության բարձր արտահոսքն է, նրանց հարազատ բնակավայրերից ժամանակավոր հեռացումը:

Ուրեմն, երկրաշարժի 10-րդ տարեդարձը դարձյալ չարդարացրեց աղետի գոտու ժողովրդի երկար ու ձիգ սպասելիքները, նրանք իրենց նյութական սուղ միջոցներով մասամբ վերացրել են աղետի հետևանքները, մասնավորապես գյուղերում, վերականգնել քայքայված բնակարանները, ոռոգման ցանցը և այլն, բայց վերականգնողական աշխատանքները պետականորեն չեն կատարվել, իսկ այդ նպատակների համար ստացված գումարները ծախսվել են: Աղետի գոտու բնակչությունը շարունակում է ապրել վթարային շենքերում, փայտե տնակներում զրկված կոմունալ հարմարություններից: Միայն Գյումրի քաղաքում դրանց թիվը հասնում է 75 հազար մարդու, իսկ թե երբ կվերականգնվի աղետի գոտին, թողնենք իշխանավորների խղճին:

АНАЛИЗ МИГРАЦИИ НАСЕЛЕНИЯ ЗОНЫ СПИТАКСКОГО ЗЕМЛЕТРЯСЕНИЯ

Х. А. АВЕТИСЯН

Резюме

Землетрясение охватило одну третью часть (11,3 тыс. км^2) территории Армении, где размещено 9 городов, 15 пгт и 16 административных районов с 370 населенными пунктами с общей численностью проживающего населения 957,4 тыс. человек.

В 1992 году численность населения зоны бедствия составила 960 тыс. человек, т.е. достигла численности населения до землетрясения, на 253 тыс. превысив численность после землетрясения, в том числе 48 тыс. человек составили естественный прирост, 205 тыс. возвратилось на свое прежнее место жительства. Таким образом, по естественному росту населения и по количеству зарегистрированных браков численность населения достигла прежнего уровня. Основная часть населения оказалась за чертой бедности, а одна треть населения выбыла из республики. Увеличилась смертность, в сравнении с 1990г., снизилась рождаемость (за последние 7 лет на 197373 человека).

---

* *Եթե սոցիալական ծանր պայմանները այդպես շարունակվեն, ապա 2015թ. ցուցանիշները կեռապատկվեն, գուցե և ավելին:*